# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«ԱՄԱ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2025/L-44 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» | «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» | Ձմեռային գլխարկ | «ՕՐԱՆԺ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | Ձմեռային գլխարկ INSARAG – Արտադրվում է առնվազը 125գրամ/մ2 մակերեսային խտությամբ ակրիլե գործվածքից, գույնը՝ սև: Գլխարկի դիմային հատվածում՝ ծալված վիճակով, սպիտակ մետաքսյա թելով և 1,5X1սմ չափսով լատինատառ ասեղնագործված է <<ARM USAR>>: Գլխարկը ներսի կողմից ունի ստուգիչ պիտակ՝ վրան նշված չափսը և արտադրողի անվանումը: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային պարկերով, մեկ պարկի մեջ մեկ հատ: Պարկերը պիտակավորված՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | վրան նշված տեսականու անվանումը, քանակը, չափսը և արտադրողի անվանումը: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասծանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից: Ձմեռային գլխարկի քանակն ըստ չափսերի N Չափս Քանակ 1 57 100 2 58 100 3 59 100 4 56 100 5 60 50 Ընդամենը 450 Ձմեռային բաճկոն INSARAG – Արտադրվում է սինթետիկ <<Oxford>> տեսակի, 140գրամ/մ2 վառ նարնջագույն և մուգ կապույտ գործվածքից: Բաճկոնի ներդիրները մշակվում են անջրաթափանց կտորով, երկկողմանի մգդակարված առնվազը 300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստաղացուն առնվազը 70 գրամ մակերեսային խտությամբ սև կտորից: Բաճկոնի օձիքի ծոծրակամասում վրակարված է 4-4.5սմ բարձրությամբ բաց գրպան՝ գլխանոցի համար: Ծոծրակի կենտրոնում՝ գլխանոցի գրպանի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ներսի կոմից և գլխանոցի արտաքին կողմից` օձիքի միացման կարից 1սմ հեռավորությամբ, մշակված են նարնջագույն 2X2սմ չափսի կպչուն ժապավեններ` գլխանոցը ծալված վիճակում պահելու համար: Գլխանոցի եզրաշերտի միջով անցնում է նարնջագույն քուղ` ծայրերին պլաստմասե, կլորավուն բռնակներով: Քուղը գլխանոցի արձակ վիճակում յուրաքանչյուր կողմից պետք է ունենա 5-6սմ գլխանոցից դուրս գտնվող հատվածներ: Օձիքի և աստառի միացման կարում մշակված է կախիչ, կախիչի տակ չափսի ստուգիչ պիտակ: Բաճկոնը կոճկվում է կենտրոնական կոճկվածքով` երկկողմանի, սև երիզաշղթայով և կպչուն ժապավեններով: Շղթան մշակված է կենտրոնական ուղղահայաց կարին զուգահեռ` սկսվում է օձիքի միացման կարից և ավարտվում ստորին եզրակարից 1սմ հեռավորությամբ: Բաճկոնի ձախ կողմում` ուղղահայց եզրակարից 1սմ խորությամբ մշակվում է 7-8սմ լայնությամբ լանջափեշ, որը սկսվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | է օձիքի միացման կարից և ավարտվում բաճկոնի ստորին եզրակարով: Բաճկոնի առաջնամասի աջ և ձախ կոմերում տեղադրված են երեքական, նարնջագույն 2,5X6սմ չափսի կպչուն ժապավեններ: Աջ կողմում տեղադրված են ուղղահայց կենտրոնական կարից ներս, յուրաքանչյուրը հաջորդից հավասար հեռավորությամբ: Առաջինը տեղադրվում է օձիքի միացման կարից 2սմ ներքը, իսկ երրորդը՝ ստորին եզրակարից 1սմ հեռավորությամբ: Ձախ կողմում տեղադրված են լանջափեշի ներքին կողմից, յուրաքանչյուրը հաջորդից հավասար հեռավորությամբ: Առաջինը տեղադրվում է լանջափեշի եզրից 2սմ ներքը, իսկ երրորդը՝ ստորին եզրակարից 1սմ հեռավորությամբ: Առաջամասում՝ կենտրոնական ուղղահայց կարերից 5-5.5սմ հեռավորությամբ, մշակված են մեկական կողային ներկարված գրպաններ՝ 20-21սմ բարձրությամբ և 16-17սմ լայնությամբ, կափույրներով: Ներկարված գրպանները ավարտվում են ստորին |

## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО АМА ПРОДАКШН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом << ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2025/Լ-44 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | եզրակարով: Կափույրները՝ 7սմ բարձրությամբ և 18սմ լայնությամբ, ամրանում են գրպանին երկուական 2X2սմ չափսի կպչուն ժապավեններով: Բաճկոնի ձախ կողմում մշակված է 17սմ բարձրությամբ և 15սմ լայնությամբ վրադիր ծոցագրպան և մեկ ներկարված գրպան՝ կենտրոնում 14սմ լայնությամբ, կողային մուտքով, որը կոճկվում է ուղղայաց շղթայով՝ կենտրոնական շղթայի կողքից: Ծոցագրպանի վերնամասի կենտրոնում և աստառի հանդիպակաց հատվածում մշակված են 2X2սմ չափսի կպչուն ժապավեններ: Կրծքավանդակի ձախ կողմում մշակվում է 14սմ երկարությամբ և 11սմ լայնությամբ վրադիր ծավալուն գրպան, 5սմ երկարությամբ և 9սմ լայնությամբ կափույրով: Կափույրի լայնությունը փոքր է գրպանի լայնությունից և տեղադրվում է գրպանի ձախ եզրակարից, գրպանին ամրանում է 3X2սմ չափսի սև կպչուն ժապավենով: Թևքերը բազկակալի հատվածում մշակված է մուգ կապույտ էլաստիկ տրիկոտաժե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մանժետով, որի միացման կարերը մնում են դարձածալի տակ: Բաճկոնի ամբողջ երկայնքով՝ թևքերը ներառյալ, հորիզոնական դիրքով անցնում են 2,5սմ լայնությամբ լուսանդրադարձիչ արծաթագույն 4 ժապավեններ, իսկ ուղղահայց դիրքով 5սմ լայնությամբ 2 ժապավեններ: Հորիզոնական դիրքով անցնող ժապավեններից երկուսը հաջորդաբար մշակված է ստորին եզրակարից 4-4.5սմ և 10-10.5սմ հեռավորությամբ: Հաջորդ երկուսը հաջորդաբար մշակված են կրծքավանդակի և թիկունքի կենտրոնում՝ թևքերի միացման կարից 1-1,5սմ և 5-5,5սմ հեռավորությամբ: Ուղղահայաց անցնող ժապավենները մշակված են ուսագլխի հատվածում թևքերի միացման կարերից 4+/-0.5սմ հեռավորությամբ և տարածվում մինչև կրծքավանդակով անցնող առաջին հանդիպակած ժապավենը: Բոլոր ժապավենների եզրերով անցնում է մոխրագույնց թելով զարդակար: Մեջքի կենտրոնական հատվածում, սպիտակ ներկով, 4X4սմ չափսով տպագրված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | <<ARM USAR>> լատինատառ: Բաճկոնի չափսերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից՝ մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Բաճկոնի սպայական կոչման տարբերանշանն արտադրվում է սև անփայլ գործվածքից՝ հնգանկյան տեսքով, դարձերեսին մշակված սև գույնի ինքնակպչուն ժապավենով: Արտաքին չափսերը՝ 72 X 52մմ +/- 2%: Վրան ոսկեգույն թելով ասեղնագործված աստղերով՝ Գնդապետ, փոխգնդապետ, մայոր – 20մմ հնգաթև աստղեր Կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ, ավագ ենթասպա, ենթասպա - 13մմ հնգաթև աստղեր: Աստղերը պետք է տեղակայվեն հետևյալ կերպ՝ Գնդապետ – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև 3 աստղերի կենտրոնը 42մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Փոխգնդապետ – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի: Մայոր – |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև աստղի կենտրոնը 45մմ: Կապիտան – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև աստղերի կենտրոնը 20մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից, չորրորդ աստղը 20մմ հեռավորությն վրա` երրորդի կենտրոնից: Ավագ լեյտենանտ – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Լեյտենանտ – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ հեռավորության վրա երկու աստղ իրար կողքի: Ավագ ենթասպա – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 20մմ, երկրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա երկրորդ աստղի կենտրոնից: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Ենթասպա – տարբերանշանի ներքևի սուր անկյան եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 25մմ, երկրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից: Ավագ - տարբերանշանի մեջտեղով՝ վերին և ստորին եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, ոսկեգույն թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն ուղղահայց դիրքով: Ավագ սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, ոսկեգույն թելով 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն հորիզոնական դիրքով: Սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, ոսկեգույն թելով կարվում են 5մմ լայնությամբ երեք ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Կրտսեր սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | երկու ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Չափսերը կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից: Փաթեթավորումը թափանցիկ պոլիէթիլենային պարկով: Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Պատվիրատուի պահանջով մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: Պատվիրատուի պահանջով մատակարարից կարող է պահանջվել մատակարարված ապրանքատեսակի լաբորատոր փորձարկման եզրակացություն: |